Ազդարարության փող

Trumpet's Sound

53-ՐԴ ՏԱՐԻ, ԱՎՍՏՐԱԼԻԱ
ՀՈՒՆՎԱՐ - ՓԵՏՐՎԱՐ 2022

Հայ Ավետարանական Եղբայրների Եկեղեցի
ARMENIAN EVANGELICAL BRETHREN CHURCH

BI MONTHLY CHRISTIAN PUBLICATION
PUBLISHED BY THE
ARMENIAN EVANGELICAL BRETHREN CHURCH
112 SAILORS BAY ROAD, NORTHBRIDGE,
NSW 2063 Australia

PASTOR HRATSH KIUJIAN
ARMENIAN EVANGELICAL BRETHREN CHURCH
PO BOX 1593, CHATSWOOD NSW 2057
email: pastor@armenianbrethren.org
URL: www.acmaust.org

«ԱԶԴԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՓՈՂ» երկամսյա թերթը Սիդնեյի Հայ Ավետարանական Եղբայրների Եկեղեցու հրատարակությունն է: Պատասխանատու խմբագիր՝ հովիվ Հրաչ Գույումճյան:

Այս թերթը անվճար բաժանվում է հայրենիքում: Յանկացողները կարող են դիմել նշված հասցեով:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Միայն Նա կարող է ինձ նոր դարձնել ..... Հովիվ՝ Հրաչ Գույումճյան

Եգիպտոսից Քանան (3) ..... Դոն Սթորմըր

Երբ Աստված անարդար է թվում ..... Ռեքս Տիրլավ

Ի՞նչ է մեզ ասում ճակատագիրը ..... Քաղված

Փողերի դատաստանները (4) ..... QMBC պանորամա

«Ես բոլորովին ոչ մի հանցանք չեմ գտնում Նրա մեջ» .... Նեյլ Բուքման

Մերժված մեծ հյուրը ..... Քաղված

Բժշկություն ..... Վեր. Հովսեփ Հովսեփյան

Տերը բարձր է ..... Վարդան Սարգիսյան

Հոգու համար ոչինչ ..... Քաղված

Ծառայության բաց դռներ ..... Անժելա Հարությունյան

Միայն Նա կարող է ինձ նոր դարձնել

Բոլորս սիրում ենք նորը: 2022 թ.-ին մեծ ակնկալիքով ենք նայում: «Նոր» բառը հաճելի է մեր ականջներին՝ նոր տուն, նոր ավտոմեքենա, նոր կոշիկներ: Իսկ ի՞նչ կասես քո մասին: Եկե՛ք անձնականացնենք: Ինչպիսի՞ն են այսօր իմ մտքերը, վերաբերմունքը, գործերը: Ո՞վ կարող է փոխել ինձ ու նոր դարձնել:

23-րդ սաղմոսում Դավիթ թագավորը խոսում է այն մասին, թե ինչպես է Աստված թարմացնում ու վերականգնում իրեն: Նա ասում է. «Հոգիս նորոգում է» (հմր. 3-5): Հայերեն թարգմանության մեջ գեղեցիկ է ասված. «... նորոգում է»:

Երբեմն կյանքը այնպիսի անակնկալներ է մատուցում մեզ, որ սկսում ենք մտածել, թե ի վիճակի չենք ճանապարհը շարունակելու: Մեր կատարած սխալ գործերի պատճառով մենք մեզ հանցավոր ենք զգում: Երբեմն ատում ենք մեր ով լինելը՝ մեր եսասիրությունը, ագահությունը ու հպարտությունը: Սա մեզ ատելությամբ է լցնում: Ո՞վ կարող է օգնել, ո՞վ կարող է փոխել մեզ, ո՞վ կարող է ուղղել մեզ և նորը դարձնել:

Աստվածաշունչը խոսում է բրուտի ու նրա ձեռքերի մասին: Գուցե փորձել եք ձեր լավագույնը անել, տվել եք ձեր ունեցած ամեն ինչը, բայց անարդյունք: Ձեր անոթը ձեր ուզած ձևը չի ստացել: Արդյոք այն երբևէ վստահե՞լ եք Բրուտին: Արդյոք Հիսուսին հանձնե՞լ եք՝ ասելով. «Ահա ես, ձևավորի՛ր ինձ և դարձրո՛ւ այնպիսի տղամարդ կամ կին, ինչպիսին Դու ես ուզում տեսնել»:

Դավիթը պարզապես բանաստեղծություն կամ երգ չգրեց: Նա մեզ պատմեց, որ միայն Աստված կարող է նորոգել կոտրված սիրտը ու այն նոր դարձնել:

2022 թ.-ի շեմին դու նույնպես կարող ես Քրիստոսին հանձնվել: Միայն Նա կարող է փոխել քեզ ու նորը դարձնել:

Այս Նոր տարվա մեջ բոլորիդ երջանկություն և օրհնություն ենք մաղթում Քրիստոսով:

Եգիպտոսից Քանան (3)

Աստված Իր Անձը բացահայտում է Մովսեսին (մաս 1)

Ինչպե՞ս է Աստված Իր Անձը բացահայտում: Այս հարցի էությունը ոչ թե հայտնության ձևի մեջ է, այլ բովանդակության: Աստծո հայտնությունը Մովսեսին որոշ կարևոր սկզբունքներ է սովորեցնում: Նախ՝ կարևոր է գիտակցել, որ Աստված սուրբ է. սա նշանակում է, որ այն վայրը, որտեղ Նա գտնվում է, նույնպես սուրբ է: Վայրը, որն Աստված ընտրում է Իր Անձը բացահայտելու համար, պետք է սուրբ համարվի: Կոշիկները հանելու պատվերն ստանալով՝ Մովսեսը հասկացավ, որ այդ վայրը սուրբ է:

Տերը Մովսեսին հայտնվեց որպես իր հոր Աստված, ինչպես նաև որպես Աբրահամի, Իսահակի և Հակոբի Աստված: Այն, որ «Աստված» բառն օգտագործված է եզակի թվով («Ես եմ քո հոր Աստվածը») նշանակում է, որ Ամրամը հավատարիմ էր Աբրահամի, Իսահակի և Հակոբի Աստծուն:

Հետաքրքրական է, թե ինչպես Աստված հայտնեց Իր Անձը Մովսեսին: Նախ կարդում ենք, որ Տիրոջ հրեշտակը կրակի բոցով հայտնվեց մորենու մեջ: Երբ Մովսեսը շրջվեց, որ տեսնի այդ տեսարանը, Տերը՝ Եհովան, խոսեց: Նա նկարագրեց Իր Անձը՝ որպես Աբրահամի, Իսահակի և Հակոբի Աստված՝ Էլոհիմ: Շատ անգամ, եթե ոչ միշտ, «Տիրոջ հրեշտակը» արտահայտությունը վերաբերում է Երրորդության երկրորդ Անձին՝ մեր Տեր Հիսուսին:

Աստված Աբրահամի հետ ուխտ էր կապել և այն նորոգել էր Իսահակի ու Հակոբի հետ: Սա անպայմանական խոստում էր այն մասին, որ երկիրը, որի վրա Աբրահամն ապրում էր որպես պանդուխտ և օտարական, նրա սերնդին պիտի տրվեր:

Աստված ասել էր, որ տեղյակ է Եգիպտոսում կատարվող դեպքերի, նաև իսրայելացիների տառապանքների մասին: Նա տեսել ու լսել էր նրանց հառաչանքը և գիտեր, որ նրանց տառապանքը անարդար էր: Տերը նաև հայտնել էր, որ հիշել է Աբրահամին տված Իր խոս-

տումը: Հասունացել էր այն ժամանակը, որ Նա Քանանի երկիրը տար Աբրահամի սերնդին:

Աստված ծրագրել էր դա անել մեկ մարդու՝ Մովսեսի միջոցով: Երբ ժամանակը գա, որ Աստված սկսի Իր ծրագրածը կատարել, Նա Իր ընտրած մարդուն կպատրաստի այդ աշխատանքի համար: Սա ճըշմարիտ էր Նեեմիայի ժամանակ, ճշմարիտ էր, երբ Տերն ընտրեց Պոողոսին՝ որպես հեթանոսների առաքյալի: Մովսեսի խնդիրն այն էր, որ նա առաջ քաշեց ամեն տեսակի պատրվակ, որպեսզի չկատարեր այն, ինչի համար Տերը կանչում էր իրեն:

Մովսեսը և նրա արդարացումները

Մովսեսը չորս արդարացում առաջ քաշեց՝ փորձելով խուսափել այն հանձնարարությունից, որի համար Աստված կանչում էր իրեն: Նա պնդեց իր անկարողությունը. «Ես ո՞վ եմ»: Նա մտածեց, թե իսրայելացիները հարցնելու են՝ ո՞վ է ուղարկել իրեն, և ի՞նչ է այդ Աստծո անունը. «Ի՞նչ է Նրա անունը»: Նա ուզում էր հասկացնել, որ իրեն ոչ ոք չէր հավատա: Նա պնդեց իր անկարողությունը որպես հրապարակախոս. «Ես ճարտարախոս չեմ»:

Վերջապես նա անդրադարձավ իր իրական խնդրին ու խնդրեց Տիրոջը ուղարկել մեկ ուրիշին: Եթե մարդը չի ուզում կատարել Տիրոջ գործը, ապա հնարավորինս ամեն բան կանի ու խելամիտ պատճառներ կներկայացնի՝ խուսափելու այն գործից, որն Աստված նախատեսել է իր համար:

Առաջին արդարացումը. «Ես ո՞վ եմ»

Այս հարցը ենթադրում է, թե Մովսեսը կարողություն չունեցող անձ էր և ի վիճակի չէր կատարելու իրեն հանձնարարված առաջադրանքը: Շատերիս համար սա կարող է լավ կեցվածք հանդիսանալ, քանի որ մենք չպետք է մեր մասին ավելի բարձր մտածենք, քան կանք: Մեզ պետք է ճշգրիտ գնահատական մեր կարողության մասին:

Սակայն Մովսեսի պարագայում սա ոչ թե Աստծո պատվիրածը չկատարելու պատճառ էր, այլ արդարացում: Աստված գիտեր, որ Մովսեսը կարողության պակաս ուներ, և նրան տվեց անհրաժեշտ միակ երաշխիքը. նրա հետ էր լինելու: Աստված ամեն ինչ գիտեր

Մովսեսի կարողության մասին և համբերատար վստահեցրեց նրան, որ իր հետ է լինելու: Աստծո ներկայության հավաստիացումից ավելի մարդը ի՞նչ կարող է խնդրել:

Այս ամենի մեջ Մովսեսը պետք է հավատքով գործեր: Աստված Մովսեսին տվեց Իր ներկայության նշանը: Երբ Մովսեսն ավարտեր իր սկզբնական առաջադրանքը՝ իսրայելացիներին Եգիպտոսից դուրս հանելը, նրանք Տիրոջը պիտի երկրպագեին այդ վայրում: Սա պետք է բավարար լիներ Մովսեսի՝ Տիրոջը հնազանդվելով առաջ ընթանալու համար:

Մենք ինչպե՞ս ենք արձագանքում մեզ հետ լինելու Աստծո խոստմանը: Կարևոր է հիշել, որ երբ Աստված խոստում է տալիս, նաև կատարում է այն: Նրա տված խոստումներից ոչ մեկը ձախողված չէ, ոչ էլ կձախողվի:

Երկրորդ արդարացումը. «Ի՞նչ է Նրա անունը»

Մովսեսի երկրորդ արդարացումը հիմնված էր այն ենթադրյալ կասկածի վրա, որ իսրայելացիները չգիտեին իրենց Աստծո անունը: Ինչպե՞ս կկարողանար գնալ ժողովուրդի մոտ ու ասեր, որ իրենց հայրերի Աստվածը խոսել է իր հետ: Մի՞թե Իսրայելը մոռացել էր Աբրահամի Աստծուն:

Սա թերևս վկայում է այն մասին, որ իսրայելացիները որոշ չափով ազդվել էին իրենց շրջապատող կռապաշտությունից: Սովորաբար ընդունված է, որ այն աստվածները, որոնց ազգը պաշտում է, հզոր են իրենց երկրում, իսկ հարևան երկրներում իշխում են այլ աստվածներ: Այն, որ կռապաշտությունը իսրայելացիների կյանքում խնդիր էր դարձել, ակնհայտ դարձավ Սինա լեռան վրա, երբ ժողովուրդը Ահարոնին խնդրեց աստվածներ պատրաստել իրենց համար, քանի որ չգիտեին, թե Մովսեսի հետ ինչ էր պատահել:

Աստված Իր շնորհքով պատասխանեց Մովսեսին ու հայտնեց Իր անունը՝ ասելով. «ԵՍ ԵՄ ՈՐ ԵՆ»: Սա ուխտ պահող հավիտենական Աստծո անունն է: Այն ընդգծում է Աստծո հավիտենական էությունը: Նա միշտ գոհ է: Նա կար, կա և միշտ լինելու է: Որպես ԵՍ ԵՄ, Աստված միշտ ներկա է:

Աստված նաև Ինքն Իրեն կոչեց «Ձեր հայրերի Աստված»: Նա Աբրահամի Աստվածն է, Իսահակի Աստվածն է և Հակոբի Աստվածն է: Սա ժամանակավոր անուն չէր Ամենակարողի համար. սա Աստծո անունն է հավիտյան: Սա այն անունն է, որով Նա հիշվում է սերնդեսերունդ: Սա նշանակում է, որ Աստված միշտ ճանաչվելու է որպես Աբրահամի, Իսահակի և Հակոբի Աստված, հետևաբար լինելու է Իր ժողովրդի Աստվածը բոլոր սերունդների համար: Նա հավիտենական ուխտ պահող և անփոփոխ Աստված է:

Աստված տեղեկություն տրամադրեց Մովսեսին ուղղված Իր պատգամում՝ մանրամասնելով՝ երկիրը Աբրահամի սերնդին տալու ուխտի տարբեր կողմերը: Աստծո այս պատգամը նշանակում էր, որ Նա մտադիր էր շարունակել իսրայելացիների՝ որպես Իր հատուկ ժողովրդի մասին հոգ տանելը: Նա Աբրահամի, Իսահակի և Հակոբի հետ ուխտ էր կապել, և եկել էր ուխտը կատարելու պահը:

Այնուհետև Աստված Մովսեսին հայտնեց այն աշխատանքը, որը մտադիր էր անել: Մովսեսը պետք է գնար ժողովրդի երեցների մոտ՝ հայտնելու, որ իրենց հայրերի Աստվածը հստակ գիտի, թե ինչ է կատարվում Իր ժողովրդի հետ, և որ Նա ազատելու է նրանց տառապանքի գերությունից և տանելու է քանանացիների երկիր: Նրանք պետք է գնային փարավոնի մոտ՝ խնդրելու, որ թույլ տա երեք օրվա ճանապարհ անցնել ու հասնել անապատ՝ զոհ մատուցելու իրենց Տեր Աստծուն:

Աստված գիտեր, որ փարավոնը հոժար կամքով թույլ չէր տալու, որ ժողովուրդը հեռանար իր երկրից: Քանի որ փարավոնը ժողովրդին արձակելու նպատակ չուներ, Աստված հայտարարեց, որ հրաշքներ է գործելու Եգիպտոսում, ինչից հետո փարավոնը ազատ է արձակելու նրանց: Այս հրաշքները անկասկած փաստելու էին, որ Եհովան միակ ճշմարիտ Աստվածն է:

Ժողովուրդը Եգիպտոսից դատարկաձեռն չպետք է հեռանար: Նրանք խնդրելու էին և իրենց խնդրածը՝ ոսկյա զարդեր և հագուստ, տրվելու էր:

Դոն Սթորմը

Երբ Աստված անարդար է թվում
Գործք Առաքելոց 12

Տարիներ առաջ նույն եկեղեցուց երկու երիտասարդ ընտանիք օրհնվեցին գեղեցիկ փոքրիկի ծնունդով: Փոքրիկները մի քանի շաբաթվա տարբերությամբ էին ծնվել, սակայն տարօրինակն այն էր, որ երկուսն էլ առողջական լուրջ խնդիրներ ունեին: Հիվանդանոցի բժիշկները ծնողներից մեկին նրբանկատությամբ հաղորդեցին, որ հիվանդանոցում այդ արատով ոչ մի նորածին ողջ չի մնացել: Այդ երեխայի ծնողները մտատանջվեցին ու աղոթեցին, բայց բժիշկը ի վերջո ստիպված եղավ անջատել կենսապահովման սարքը: Սակայն այդ երեխան շարունակեց ապրել: Բժիշկները չկարողացան հավատալ ու ծնողներին ասացին, որ այս վերականգնումը բժշկական բացատրություն չունի: Նրանք դա համարեցին հրաշք: Ես գիտեմ, որ այս պատմությունը ճշմարիտ է, քանի որ այդ երեխան իմ զավակն է:

Իսկ մյուս հիվանդ փոքրիկի հետ ի՞նչ եղավ: Ծնողները և շատ ուրիշներ աղոթեցին, բայց նա մահացավ: Կարծում եմ, որ կարող եք պատկերացնել այդ ժամանակ մեր եկեղեցում ինչպիսի մտքեր առաջացան: Ինչո՞ւ է Աստված թույլ տալիս նման բաներ: Եթե Նա կարող է մեկի աղոթքին պատասխանել, ապա ինչո՞ւ մյուսին չի պատասխանում: Արդյո՞ք դժվար բան էր խնդրվածը:

Գործք Առաքելոց 12-րդ գլխում կարդում ենք նման իրավիճակով մի պատմություն: Երկու բարեպաշտ մարդ չար թագավոր Հերովդեսի կողմից բանտ նետվեցին: Հակոբոսը գլխատվեց, իսկ նրա մտերիմ ընկեր Պետրոսը հրեշտակի միջամտությամբ հրաշքով փրկվեց: Հակոբոսի կյանքը մեկ ակնթարթում մարեց բռնակալ Հերովդես թագավորի քաղաքական քմահաճույքի պատճառով: Թվում է, թե Հակոբոսի մահը Ավետարանի համար մղվող պայքարի մեջ մեծ արձագանք չունեցավ, ինչպես Ստեփանոսի նահատակությունը: Նրա կյանքը պարզապես օգտագործվեց մի քանի քաղաքական միավոր գնելու համար, որպեսզի Հերովդեսը հրեաների հավանությանը արժանանար:

Երբեմն մահը մեզ համար անիմաստ է թվում:

Արդյո՞ք Աստված իսկապես բարի է:

Մտածե՛ք դոկտ. Փոլ Քարլսոնի պատմության մասին: Նա որպես բժիշկ-միսիոներ ծառայում էր այդ ժամանակվա բելգիական Կոնկոյում: Այն, ինչին այնտեղ ականատես եղավ, փոխեց իր ողջ կյանքը: Երբ վերադարձավ տուն՝ Կալիֆորնիա, չկարողացավ մոռանալ այնտեղ գտնվող անհույս ժողովրդի վիճակը: Ընտանիքին իր հետ վերցնելով՝ վերադարձավ Աֆրիկա ու բուժկետ բացեց: Երկու տարի անց դոկտ. Քարլսոնը հայտնվեց Կոնկոյի արյունալի պատերազմում:

Այլ ամերիկացիների հետ գերի ընկավ: Փախչելու միայն մեկ հնարավորություն կար: Եթե կարողանային բարձր պատը բարձրանալ ու այն կողմ ցատկել, ապա անվտանգ տեղ կհասնեին: Դոկտ. Քարլսոնը մագլցեց պատը ու հասավ եզրին: Քիչ էր մնացել, որ ազատության մեջ հայտնվեր, երբ փամփուշտը խոցեց մարմինը: Նա մահացավ: Սա կարծես թե անիմաստ սպանություն էր: Ինչո՞ւ, ով Տե՛ր, ինչո՞ւ չշեղեցիր կրակողին, որ սխալ կրակեր: Նույնիսկ փոքր միջատը նրա քթի վրա բավական էր փոխելու պատմության ելքը: Այսպես ավարտվեց մի բարի մարդու երկրային կյանքը՝ թողնելով սիրած կնոջն ու երկու զավակներին: Նրա փափագածը պարզապես Աֆրիկայի հիվանդ մարդկանց օգնելն էր:

Երբեմն Աստված պարզապես արդար չի թվում: Ինչպե՞ս եք գնահատում այս խոսքերը: Մեկը բժշկվում է, մյուսը մահանում է: Մեկը անհոգ ու հանգիստ կյանք է վարում, իսկ մյուսն անցնում է փորձությունից փորձություն ու երբեք հանգիստ կյանք չի ունենում:

Մենք հակված ենք հարցնելու. «Ինչո՞ւ Հակոբոսը գլխատվեց, իսկ Պետրոսը փրկվեց»: Բայց այստեղ «ինչո՞ւ» հարցին չենք անդրադառնում: Այս պատմության մեջ ներգրավված քրիստոնյաները լացեցին Հակոբոսի համար և ուրախացան Պետրոսի համար, բայց ինձ թվում է՝ նրանք չտվեցին այն մեծ հարցերը, որոնք հաճախ մենք տալիս ենք Աստծո մասին նման իրավիճակներով անցնելու ժամանակ՝ մտածելով, թե Աստված անարդար է: Կարծում եմ՝ նրանք սովորել էին տառապանքին նայել մեկ այլ տեսանկյունից: Նրանք տառապանքը դիտարկեցին ոչ մեզ նման: Կյանքի ակնկալիքների մեր

ցանկում տառապանքն ու նեղությունը տեղ չունեն: Մեր նպատակը երջանիկ ու լավ զգալն է: Երջանկության ձգտումը գրված է ամերիկյան սահմանադրության մեջ՝ որպես բոլոր մարդկանց անօտարելի իրավունք: Սա նշանակում է, որ երբ տառապանքի ենք հանդիպում, սկսում ենք եզրակացնել, որ ինչ-որ բան սխալ է: Սա կարող է ընդհանրապես այդպես չլինել: Ընդհակառակը՝ սա կարող է պարզապես նշանակել, որ ամեն ինչ բնական ընթացքի մեջ է:

Երբ Աստված անարդար է թվում

Երբ տեսնում ենք, որ մարդկանց կյանքում ողբերգություն է տեղի ունենում, որոնք ստիպում են մեզ տրտնջել ու մտածել, թե Աստված անարդար է, ուրեմն մեր սրտում իրականում մտածում ենք, թե Աստված պարտական է մեզ լավ կյանքով ապահովել: Մենք հաճախ հակված ենք Աստծուն գնահատել մեր նպատակներին հասնելու մեջ Իր ձեռքը մեկնելու և մեզ մեր նպատակին հասցնելու կարողությամբ: Եթե մեր նպատակը երջանիկ զգալն է, Աստված կարող է օգտակար լինել: Նա ներում է մեզ մեր մեղքերը և խոստանում Երկրնքում տեղ ապահովել: Սա հրաշալի է, այն մեզ լավ զգացում է պարգևում, և մենք պատմում ենք այն մասին, թե որքան բարի է Աստված: Բայց երբ ինչ-որ ցավալի կամ տխուր բան է պատահում մեզ հետ, փորձությունը գալիս է: Աստված մեզ չի օգնում՝ հասնելու մեր նպատակին, երջանիկ լինելու, ուստի բողոքում ենք ու պահանջկոտ դառնում: Մեր պահանջները հիմնված են երկու շատ սխալ գաղափարների վրա. առաջին՝ մենք իրավունք ունենք հասկանալու, երկրորդ՝ Աստված պարտավոր է բացատրություն տալ: Հոբն իր տառապանքներով անցնելուց հետո երբեք բացատրություն չստացավ: Նա միայն Աստծո մեծության հայտնությունը ստացավ: Սա նրա կյանքի բոլոր իրադարձությունները այլ հարթակ տեղափոխեց, որը դրդեց իր տառապանքին բոլորովին այլ կերպով նայել:

«Երանի՜ նրանց, որ ողբում են, որովհետև նրանք պիտի մխիթարվեն» (Մատթ. 5:4):

Ոչ թե «Երանի՜ սգավորներին, որովհետև նրանք բացատրություն կստանան»: Վատ բաները բարի մարդկանց են պատահում այնպիսի պատճառներով, որոնք մեր հասկացողությունից վեր են:

Վաղ թե ուշ ճգնաժամն ու ցավը թակելու են մեր կյանքի դուռը, և աղաղակելու ենք՝ ասելով. «Եթե Աստված իսկապես սիրում է ինձ, ապա ինչպե՞ս թույլ տվեց, որ սա տեղի ունենա կյանքիս մեջ»: Ճգնաժամի և ցավի մեջ ընտրելու հնարավորություն ունեք: Ընտրությունը կա՛մ զայրույթով ու անհավատությամբ Աստծուց երես թեքելն է, կա՛մ ասելը. «Չնայած այն ամենին, ինչ կյանքիս մեջ կատարվում է հիմա, ես հավատում եմ, որ Աստված վերահսկում է, և Նա իսկապես բարի է ու սիրով է գործում իմ օգտի համար: Ես ընտրում եմ Նրան ենթարկվելը, քան բացատրություններ պահանջելը»: Ենթարկվելն ընտրելը ձեր հոգևոր կյանքի առանցքային և շրջադարձային կետն է: Այն Աստծո հետ ձեր փոխհարաբերությունները նոր և ավելի խորը մակարդակի վրա է փոխադրում:

Հավատացե՛ք ձեր սրտում, որ հավատքը անկախ է տրամաբանությունից կամ մտքից: Եթե արդեն ունեք այս ճշմարտությունը ձեր սրտում, ապա տառապանքի կամ ճգնաժամի ժամանակ դուք ավելի հեշտ կկարողանաք կառավարել իրավիճակը:

Ռեքս Տիրլավ

❋ ❋ ❋

«Թո՛ղ սերն առանց կեղծավորության լինի:
Ատի՛ր այն, ինչ չար է: Կառչի՛ր բարուն:
Իրար հանդեպ գթալից եղեք եղբայրական սիրով
և պատվելիս միմյանց տվեք գերապատվությունը:
Գործի մեջ ծույլ մի՛ լինեք, հոգով ջերմեռա՛նդ եղեք,
Տիրո՛ջը ծառայեցե՛ք:
Հույսով ուրա՛խ եղեք, նեղությանը համբերե՛ք, աղոթքների մեջ հարատևե՛ք:
Սրբերի կարիքներին հաղո՛րդ եղեք, հյուրասիրությանը հետևե՛ք:
Օրհնեցե՛ք ձեզ հալածողներին, օրհնեցե՛ք ու մի՛ անիծեք:
Ուրախացողների հետ ուրախացե՛ք և լացողների հետ լացե՛ք:
Միմյանց հետ համերա՛շխ եղեք: Բարձր բաներ մի խորհեք, այլ՝ խոնարհների հետ ներողամտությամբ վարվեք: Դուք ձեզ իմաստուն մի՛ համարեք»:

Հռոմ. 12:9-16

Ի՞նչ է մեզ ասում ճակատագիրը

«Թող ձեր սրտերը չխռովվեն. Աստծո՛ւն հավատացեք, նույնպես Ինձ հավատացեք» (Հովհ. 14:1):

Ասացվածքները և ասույթները հիմնված են երկար տարիների փորձառության վրա: Երբ մենք զգուշանում ենք ապագայից, մարդիկ փորձում են հանգստացնել մեզ և ասում են. «Մի՛ անհանգստացիր: Ամեն ինչ լավ է լինելու»: Սակայն այս խոսքերը, որոնք այդքան հեշտությամբ արտասանում ենք, երբ մեզ մոտ ամեն ինչ լավ է, սովորաբար չեն օգնում ապագայի իրադարձությունների անորոշությունից առաջացած վախը հեռացնելու հարցում:

Վախը հեռանում է միայն այն դեպքում, երբ լինում են երաշխիքներ: Այսպիսով, սովորաբար հույսն զուգորդվում է անորոշության հետ: Ի՞նչ է ինձ ասում ճակատագիրը: Ո՞վ կարող է պատմել այն մասին, թե ինչ է սպասում ինձ ապագայում:

Արդյո՞ք պետք է, որ հույսը զուգորդվի անորոշության հետ: Ո՛չ, եթե մենք որոշել ենք ապավինել Աստծուն: Իր Խոսքում Նա խոստանում է, որ ապագան չի հիասթափեցնելու մեզ: Երբ Տեր Հիսուս Քրիստոսը պատրաստվում էր վերադառնալու Հոր մոտ՝ Երկինք, աշակերտները վախ ապրեցին: Եվ դա հասկանալի է: Սակայն Հիսուսը մխիթարեց նրանց. «Աստծուն հավատացե՛ք, նույնպես Ինձ հավատացե՛ք»: Սա նշանակում էր, որ նրանց ճանապարհին ապահով էր լինելու, քանի դեռ հավատարիմ էին Տիրոջը, ով շուտով պետք է անտեսանելի դառնար նրանց համար:

Այդպես է նաև այսօր: Անտեսանելի Աստծո և Նրա Որդու՝ Հիսուս Քրիստոսի հանդեպ հավատքը երջանիկ ապագա ձեռք բերելու միակ հնարավորությունն է նրանց համար, ովքեր ձգտում են որոշակիության և անվտանգության:

Քաղված

❋ ❋ ❋

Փողերի դատաստանները (4)

7. Գետից դուրս եկած գազանը (13:1-10)

Աստվածաշնչյան մարգարեությունը հստակեցնում է, որ հին Հռոմեական կայսրությունը (մ.թ.ա. 100 – 476 թթ.) վերականգնվելու է ու կազմվելու է տասը թագավորություններից: Այս վերածնված կայսրությունը իր գագաթնակետին կհասնի Մեծ նեղության ժամանակաշրջանում: Հայտ. 6:2-ում նշված ճերմակ ձիու վրա նստած հեծյալը կլինի վերածնված Հռոմեական կայսրության ղեկավարը:

Մեծ նեղության կեսին այս ղեկավարը խախտելու է Իսրայել ազգի հետ նախկինում կնքված ուխտը և «զոհն ու պատարագը դադարեցնելու է» (Դան. 9:27): Այդ պահին վիշապը (այսինքն՝ սատանան) ղեկավարին տալու է իր զորությունը, աթոռը ու մեծ իշխանություն (Հայտ. 13:2): Այս մարդը այնուհետև չարագործության ամենավատ բնույթի գործողություններ է կատարելու՝ Մեծ նեղության ժամանակաշրջանի մնացած 3.5 տարիներին: Նա գազանի կերպարանք կստանա, և սա այն է, ինչ Հովհաննեսը տեսավ Հայտ. 13:1-ում. «Եվ ես կանգնեցի ծովի ավազի վրա և տեսա, որ ծովից մի գազան էր բարձրանում, որ ուներ յոթ գլուխ և տասը եղջյուր, և նրա եղջյուրների վրա՝ տասը թագ, իսկ նրա գլուխների վրա՝ հայհոյության անուն»:

Գազանը ծովից է դուրս գալիս: Դա բառացի այնքան էլ իմաստ չունի, ուստի մենք ենթադրում ենք, որ ծովը ներկայացնում է փոթորկի մեջ գտնվող ազգերին (հմմտ. Հայտ. 17:15, Եսայի 57:20), որոնցից դուրս կգա այն գազանը, որը անհավատ աշխարհին կհամոզի, որ ինքն ունի աշխարհի բոլոր խնդիրների լուծումները: Ավելի ուշ կխոսենք երկրից դուրս եկող մեկ այլ գազանի մասին, և նա կլինի հրեա՝ իսկական նեռը:

Ծովից դուրս եկած գազանը նման էր հովազի, արջի և առյուծի, և սա հասկանալու համար պետք է վերադառնանք Դան. 7:1-7-ին: Դանիելն իր երազում տեսավ աշխարհակալ չորս հաջորդական կայսրությունները, այսինքն՝ Բաբելոնյան (առյուծը՝ հմր. 4), Մեդո-

պարսկական (արջը՝ հմր. 5), Հունական (ինձ՝ հմր. 6) և Հռոմեական (սարսափազդու ու վախեցնող գազանը – հմր. 7): Քանի որ յուրաքանչյուր կայսրություն պարտվում էր ճակատամարտում, նոր կայսրությունը որդեգրում էր հին կայսրությունների որոշ առանձնահատկությունները: Հետևաբար, երբ Հռոմեական կայսրությունը մեջտեղ եկավ, այն ուներ երեք նախորդ կայսրությունների որոշ առանձնահատկություններ: Ուստի երբ Հայտ. 13-րդ գլխում կարդում ենք վերածնված Հռոմեական կայսրության մասին, հասկանում ենք, որ այն նաև կունենա նախկին կայսրությունների որոշ բնութագրեր՝ հիշեցնելով հովազ, արջ և առյուծ (Հայտ. 13:2): Պետք է նաև նշել, որ «գազան» եզրույթը կարող է վերաբերել կայսրության ղեկավարին, կամ երբեմն՝ հենց կայսրին: Այստեղ այն կարծես թե վերաբերում է կայսրության ղեկավարին:

Գազանը տասը եղջյուր ուներ, յուրաքանչյուր եղջյուր՝ մեկ թագ: Նա ուներ յոթ գլուխ՝ հայհոյանքների անուններով: Տասը եղջյուրները ներկայացնում են տասը թագավորների, որոնք կառավարում են վերածնված Հռոմեական կայսրությունը կազմող տասը ազգերին: Գազանը իշխելու է նրանց վրա: Այսօրվա Եվրոպական միությունը շատ նման է վերածնված Հռոմեական կայսրությանը, ինչպես նկարագրված է Սուրբ Գրքում, այստեղ և այլուր (տե՛ս Դան. 7 և 8 գլուխները): Յոթ գլուխները ներկայացնում են յոթ թագավորների (լրացուցիչ մանրամասների համար տե՛ս Հայտ. 17:9-13-ը):

Այս յոթ թագավորներից մեկը կարծես թե մահացու վերք ուներ, բայց վերքը բուժվեց, և թագավորը ողջ մնաց: Սա անհավատների մոտ մեծ զարմանք առաջացրեց, և նրանք հիացմունքով հետևեցին գազանին: Իհարկե, սա սատանայական զորության ցուցադրում կլինի, և մարդիկ կերկրպագեն վիշապին ու գազանին (Հայտ. 13:3-4):

Սատանան գազանին զորացնելու է՝ Աստծուն հայհոյելու և երկրնքի ու այնտեղի բնակիչների մասին չարախոսելու: Սատանան կզայրանա, որ իր գործունեությունը լինելու է միայն երկրի վրա, ուստի մեծ ուժ կտա գազանին՝ սրբերի հետ պատերազմելու ու նրանց հաղթելու համար: Գազանի իշխանությունը տարածվելու է ամբողջ աշխարհում, և բոլոր անհավատները երկրպագելու են նրան: Սրբերից շատերը հալածվելու են ու սպանվեն, բայց նրանց կոչ է արվելու

համբերատար ու հավատարիմ լինել: Կարճ ժամանակ անց գազանը կհանդիպի իր սարսափելի վախճանին և կենդանի կգցվի այրվող ծծմբի կրակե լճի մեջ (Հայտ. 13:5-10, 19:20):

8. Երկրից դուրս եկող գազանը (13:11-18)

Հովհաննեսն իր տեսիլքում տեսնում է երկրից դուրս եկող մեկ այլ գազանի: Նա նույնպես կզորանա սատանայի կողմից և նույնիսկ ավելի համոզիչ կլինի, քան առաջին գազանը: Այսպիսով, սատանան և երկու գազանները կկազմեն չարի երրորդություն և կլծվեն ամբողջ աշխարհի բնակչությանը խաբելու ու ստրկացնելու:

Հստակ է, որ այս երկրորդ գազանը նեռն է՝ հետևյալ պատճառներով.

1. Նա կլինի հրեա (հմր. 11, հմմտ. Դան. 11:37):
2. Նա կնմանակի Աստծո Գառին (հմր. 11, հմմտ. Հովհ. 1:29):
3. (Նա կկատարի մեծ և հրաշագործ նշաններ (հմր. 13, հմմտ. Եբր. 2:4, Հովհ. 2:23):

Գազանը մարդկանց կպատվիրի 1-ին գազանի պատկերը պատրաստել: Այնուհետև նա շունչ կտա գազանի պատկերին, որպեսզի այն կարողանա խոսել եւ սպանել բոլոր նրանց, ովքեր հրաժարվում են երկրպագել պատկերին: Բոլորը պետք է հատուկ նշան ստանան աջ ձեռքին կամ ճակատին: Նրանք, ովքեր չունենան այդ նշանը, իրավունք չեն ունենա գնելու կամ վաճառելու: Այս հատուկ նշանը գազանի անունն է կամ նրա անվան համարը՝ մարդու համարը՝ 666:

Բարեպաշտ հրեաները կսարսափեն, երբ տեսնեն իրենց տաճարը պղծված, քանի որ առաջին գազանի պատկերը կտեղադրվի սուրբ վայրում, որտեղ միայն Աստծուն պետք է երկրպագեն ու ծառայեն (Դան. 9:27, Մատթ. 24:15): Այս պատկերի տեղադրումը կլինի նաև լեռներ փախչելու ազդանշանը, ինչպես նկարագրված է նախորդ սերտողություններում (6 -րդ բաժնում):

Պողոս առաքյալը Բ Թես. 2:1-12-ում լույս է սփռում այս ժամանակաշրջանի իրադարձությունների վրա: Կան տարբեր մեկնաբանություններ, բայց եթե ընդունենք այն մեկնությունը, որ Պողոսն այս-

տեղ խոսում է երկրից դուրս եկած գազանի՝ նեռի մասին, ապա կիմանանք, որ վերջինս ինքնիրեն հռչակելու է որպես աստված ու նստելու է Աստծո տաճարում (Բ Թես. 2:4): Այսպիսով, մինչ բռնապետը (ղեկավարը) իր աթոռը կունենա Հռոմում, նեռն իր աթոռը կունենա Երուսաղեմի տաճարում:

9. Ամփոփում

Այս դասաշարում լուսաբանեցինք փողերի դատաստանները, հրեշտակն ու գրքույկը, երկու վկաները, կինը (Իսրայել ազգը) և վիշապը (սատանան): Մենք նաև դիտարկեցինք Քրիստոսի առաջին և երկրորդ գալուստները:

Նաև նշեցինք, որ ամենածանր տառապանքն ու վիշտը տեղի կունենան Մեծ նեղության ժամանակաշրջանի վերջին 3.5 տարում («Հակոբի նեղության ժամանակը» (Երեմ. 30:7)), երբ սատանան կստեղծի իր չար երրորդությունը՝ կազմված իրենից ու երկու գազաններից:

QMBC պանորամա

(Վերջ)

«Տեսե՛ք, թե Հայրը մեզ ինչպիսի սեր շնորհեց, որ մենք Աստծո
որդիներ կոչվենք. սրա համար է, որ աշխարհը մեզ չի ճանաչում,
որովհետև Իրեն էլ չճանաչեց:
Սիրելինե՛ր, մենք հիմա Աստծո որդիներն ենք,
ու դեռևս հայտնի չէ, թե ինչ ենք լինելու. բայց գիտենք,
որ երբ Նա հայտնվի, Նրա նման պիտի լինենք,
քանի որ Նրան տեսնելու ենք այնպես, ինչպես որ Նա է:
Եվ ամեն մարդ, որ իր մեջ այս հույսն ունի,
մաքրում է ինքն իրեն, ինչպես որ Նա է մաքուր:
Ով մեղք է գործում, նույնպես անօրինություն է անում,
որովհետև մեղքն անօրինություն է:
Եվ գիտենք, որ Նա մեր մեղքերը վերցնելու
համար հայտնվեց, և Նրա մեջ մեղք չկա:
Ով մնում է Նրա մեջ, մեղք չի գործում. ով մեղք է գործում,
չի տեսել Նրան ու չի ճանաչել Նրան»:

Ա Հովհ. 3:1-6

«Ես բոլորովին ոչ մի հանցանք չեմ գտնում Նրա մեջ»

Պիղատոսը տրամադրություն չուներ հրեա կառավարիչների ուզածը կատարելու: Նա ստիպված էր դուրս գալ նրանց մոտ, քանի որ նրանք, պալատ մտնելով, չէին ուզում «պղծվել»: Վաղ առավոտ էր: Նա զայրացավ, որ հրեաներն ուզում էին պարզապես օգտագործել իրեն:

Նրանք հավանաբար ուշ երեկոյան պատվիրակություն ուղարկեցին Պիղատոսի առանձնատուն՝ Հիսուսին ձերբակալելու ծրագրի մասին տեղեկացնելու և համաձայնություն ստանալու համար Հիսուսին շուտ խաչելու առումով: Հրեաներն ակնկալում էին Պիղատոսի համագործակցությունը:

«Այս մարդու դեմ ի՞նչ մեղադրանք ունեք», - հարցրեց նա:

Հրեաները անհամբեր ու զայրացած պատասխանեցին. «Եթե Նա չարագործ չլիներ, մենք քո ձեռքը չէինք մատնի Նրան»:

Պիղատոսը ոտքի կանգնեց ու պատասխանեց. «Դուք առեք և ձեր Օրենքի համաձայն դատեցեք Նրան»:

Հրեա առաջնորդները քողարկված զայրույթով պատասխանեցին. «Մեզ համար օրինավոր չէ որևէ մարդու մահապատժի ենթարկել»:

Պիղատոսը նորից պալատ մտավ: Հիսուսին բերեցին նրա առջև: Նրա տված առաջին հարցը նույնքան տարօրինակ էր, որքան այն իրավիճակը, որի մեջ նա հայտնվել էր:

- Դու հրեաների թագավո՞րն ես:

Հիսուսը ողջ գիշեր արթուն էր մնացել: Նրան ծաղրել ու ծեծել էին հրեական ատյանում, բայց Նրա պատասխանը հանգիստ ու անկեղծ էր. «Դու քեզանի՞ց ես դա ասում, թե՞ ուրիշներն ասացին քեզ Իմ մասին»:

Պիղատոսը ջղայնացած էր այդքան պարզ, անմիջական և անձ-

նական հարցից: Արդյո՞ք նա իսկապես ուզում էր իմանալ, թե ով է Հիսուսը, թե՞ սա պարզապես օրինական էր:

- Մի՞թե ես հրեա եմ:

Պիղատոսը պատասխանեց.

- Քո ազգը և գլխավոր քահանաները Քեզ իմ ձեռքը մատնեցին. Դու ի՞նչ ես արել:

- Իմ թագավորությունն այս աշխարհից չէ. եթե Իմ թագավորությունն այս աշխարհից լիներ, ապա Իմ ծառաները կկռվեին, որ Ես հրեաների ձեռքը չմատնվեմ, բայց հիմա Իմ թագավորությունն այս տեղից չէ, - պատասխանեց Հիսուսը:

Պիղատոսը լսեց նրա ասածը:

- Ուրեմն դու թագավո՞ր ես, - ասաց նա:

- Դու ասում ես, թե Ես թագավոր եմ: Ես այս նպատակի համար եմ ծնվել և այս պատճառով եմ եկել աշխարհ, որ ճշմարտությունը վկայեմ: Ամեն մեկը, որ ճշմարտությունից է, լսում է Իմ ձայնը:

Ճշմարտությո՞ւն: Պիղատոսը զինվորական և քաղաքական գործիչ էր: Ճշմարտությո՞ւն: Նրա իմացած բոլոր մարդիկ ստախոսներ են: Ոչ ոք հետաքրքրված չէր ճշմարտությամբ, այլ միայն նրանով, ինչ լավ էր իրենց համար: Ճշմարտությո՞ւն: Արդյո՞ք այդպիսի բան կա:

Նա գուցե դառնորեն հարցրեց. «Ի՞նչ է ճշմարտությունը»: Եվ առանց պատասխանի սպասելու՝ անհանգիստ վերադարձավ հրեա կառավարիչների մոտ:

Նա հրապարակեց իր դատավճիռը.

- Ես բոլորովին ոչ մի հանցանք չեմ գտնում Նրա մեջ:

Սիրելի՛ ընթերցող, Նրա մեջ որևէ հանցանք գտնո՞ւմ ես:

Պիղատոսը չորս անգամ հայտարարեց, որ Տեր Հիսուսն անմեղ է, ապա հանձնեց Նրան, որ ծեծեն և խաչ բարձրացնեն:

Արդյոք դու նո՞ւյնն ես անում: Դու Նրա մեջ որևէ հանցանք չես գտնում, բայց մեջքդ շրջելով՝ հեռանո՞ւմ ես Նրանից: Արդյոք ասո՞ւմ

ես. «Ես այդ արդարի արյունից անպարտ եմ. դո՛ւք մտածեք»:

Հիսուսի մահը շատ ավելին էր, քան անմեղ մարդուն դավաճանելը: Նա մեղքի համար Աստծո որոշած զոհն էր, Նա իմ և ձեր մեղքի համար կրեց մահապատիժը: Նա հավիտենական կյանքի տանող միակ ճանապարհն է:

Իսկապես Նրա մեջ չկա որևէ թերություն: Նա պատրաստ էր հանուն մեզ մեռնելու: Մեր մեղքը Նրան խաչը հանեց: Դու չես կարող ձեռքերդ լվանալ ու ասել, թե բաժին չունես: Դու ներգրավված ես, ուստի կա՛մ պետք է ապաշխարես, խոնարհվես Տիրոջ առջև և ընդունես Նրա ներման պարգևը, կա՛մ պետք է կանգնես Աստծո դատաստանի առջև և քո մեղքերի համար պատասխան տաս:

Ո՛վ մեղավորներ, փնտրե՛ք Նրա շնորհքը.
Նրա բարկությանը չեք կարող դիմանալ:
Դիմե՛ք Նրա խաչին,
Եվ այնտեղ փրկություն կգտնեք:

Նեյլ Բուքման

Մերժված մեծ հյուրը

Վիեննացի հայտնի բժիշկ Ադոլֆ Լորենցը անցյալ դարի կեսին ապրող աշխարհահռչակ վիրաբույժ էր: Ամեն կողմից մարդիկ նրան էին դիմում և խնդրում, որ միջամտի՝ թանկագին կյանքեր ազատելու համար: Անկարող լինելով գոհացնել բոլորին՝ ուրիշ մասնագետներ պատրաստեց: Իր օգնականներին սովորեցրեց վիրաբուժական արվեստի բոլոր գաղտնիքները, և այս կերպով գործը մի քիչ թեթևացավ: Եվ նա կարողացավ Միացյալ Նահանգներ մեկնել, ուր հրավիրված էր՝ դասախոսելու կույրաղիքի և աղեթափության վիրահատությունների մասին:

Մի օր՝ ուշ ժամի, ծանր աշխատանքից հետո դուրս եկավ՝ մաքուր

օդ շնչելու և քայլելու: Հանկարծ սև ամպեր կուտակվեցին երկնքում, և տեղատարափ անձրև սկսվեց: Բժիշկը բախեց գեղեցիկ տեսքով մի տան դուռ, որպեսզի անձրևից պաշտպանվի: Դուռը բացեց մի ջղայնացած կին և ասաց.

- Մենք այսօր մեծ նեղության մեջ ենք: Գնացե՛ք և հարևանի տա՛նը ապաստան փնտրեք, - և անմիջապես փակեց դուռը:

Դոկտոր Լորենցը այդ աննպաստ եղանակին մնաց փողոցում: Անձրևն ու փոթորիկը թափանցում էին մինչև իր ոսկորները: Վերջապես մի մարդ, նրան գտնելով, կառքի մեջ նստեցրեց և պանդոկ տարավ:

Այդ նույն գիշերը վերոհիշյալ կինը օրաթերթ էր կարդում: Առաջին էջի վրա աչքն ընկավ նշանավոր վիրաբույժի նկարին: Անմիջապես նրան ճանաչեց և բացականչեց.

- Աստվա՛ծ իմ, ի՞նչ արեցի: Մերժեցի տանս դուռը բացել այն միակ անձի առջև, որը կարող էր մեր աղջկա կյանքը փրկել: Թերևս եթե հիմա նրան պատմենք մեր պարագան, նա գթա մեզ և կատարի մեր խնդրանքը:

Ուստի վազեց դեպի պանդոկ: Այնտեղ նրան ասացին, որ հանրաճանաչ բժիշկը դասախոսության է, և չի կարելի նրան խանգարել: Կինը անձկությամբ սպասեց, բայց իզուր. Ադոլֆ Լորենցը, ուրիշ դրոնով դուրս գալով, շոգեկառք նստեց և հեռավոր քաղաք գնաց:

Հիսուս Քրիստոսը՝ աշխարհի Փրկիչը և հոգիների մեծ Բժիշկը, թակում է շատերի սրտերի դուռը: Նա ուզում է բուժել նրանց հիվանդ հոգիները և մեղսալից սրտերը: Սակայն նրանք մերժում են ընդունել այն միակ Անձին, ով կարող է իրենց ազատել մեղքի ու մոլության շղթաներից: Առաքյալն ասում է. «Ուրիշ ո՛չ մեկով փրկություն չկա, որովհետև մարդկանց տրված ուրիշ մի անուն չկա երկնքի տակ, որով մենք կարողանայինք փրկվել» (Գործք 4:12): «Մենք ինչպե՞ս պիտի ազատվենք, եթե անհոգ գտնվենք այնպիսի մեծ փրկության հանդեպ, որ նախ՝ հռչակվեց Տիրոջ կողմից և ապա՝ մեր մեջ հաստատվեց նրանց միջոցով, որ Իրենից էին լսել» (Եբր. 2:3):

Քաղված՝ «Զմայլելի դրվագներ» գրքից

Բժշկություն

Հակ. 5:13-20

«Առողջությունն ամենակարևոր բանն է»,-ասում են մարդիկ: Ի՞նչ օգուտ կարող են տալ փողը, գեղեցությունն ու կրթությունը հիվանդ մարդուն: Մարդիկ շատ գումար են ծախսում իրենց առողջությունն ապահովագրելու համար: Նրանք մտահոգվում են իրենց առողջական խնդիրներով: Գովազդվում են մարզական սարքեր, սննդակարգեր, տեսահոլովակներ, որոնք խոստանում են բարելավել մեր կյանքը:

Շատ հիվանդություններ ի ծնե արատների կամ դժբախտ պատահարների արդյունք են: Բոլորս էլ ենթակա ենք բնական օրենքներին և ժամանակավոր հիվանդանում ենք: Այնուամենայնիվ, կան հիվանդություններ, որոնք անհատի վերաբերմունքի և կենսակերպի արդյունք են, և դրանք կարելի է կանխարգելել: Չափից շատ ուտելը, թմրամոլությունը, ծխելը, հարբեցողությունը և նույնիսկ փնթիությունը սովորաբար հիվանդությունների և մարմնի քայքայման պատճառ են դառնում: Լարվածության, վախի, վշտի, նախանձի, բարկության և ատելության հույզերը նույնպես կարող են հիվանդության պատճառ դառնալ:

Աստվածաշնչում բժշկությունը շատ ավելի լայն հասկացություն է, քան հիվանդությունից բուժվելը. այն նշանակում է հոգու և մարմնի առողջություն: Դիտարկենք բժշկությանը վերաբերող աստվածաշնչյան երեք մոտեցումները:

Աստծո հրաշագործ միջամտությունը

Ըստ Նրա գերիշխան կամքի ու նպատակի Աստվածաշունչը լի է հրաշագործ բժշկումների օրինակներով: Նույնիսկ այսօր ամենուրեք բազմաթիվ վկայություններ են արվում: Բայց Աստված չի բժշկում բոլոր նրանց, ովքեր կանչում են Իրեն կամ որոնց համար աղոթում են: Պետրոս առաքյալը վստահեցնում է.«Ճշմարտությամբ հասկանում եմ, որ Աստված անաչառ է» (Գործք 10:34):

Աստված ոմանց բուժում է, ոմանց՝ ոչ: Ինչո՞ւ: Որովհետև... «Նրա ճամփաները մեր ճամփաները չեն» (Ես. 55:8):

Սա չպետք է խանգարի, որ մենք աղոթենք հիվանդների համար: Հիսուսը մեզ պատվիրում է անդադար աղոթել հիվանդների համար.

«Պետք է ամեն ժամանակ աղոթք անել և չձանձրանալ» (Ղուկ. 18:1):

Նոր ծնունդ

Երբ մարդը Քրիստոսով վերստին ծնվում է, դառնում է «նոր արարած»: Շատերն են վկայում, որ Քրիստոսին ընդունելու որոշում կայացնելուց հետո սկսել են բարեպաշտ կյանքով ապրել, և շատ հիվանդություններ բուժվել են:

Նոր ծնունդը նոր կյանք ու նոր վերաբերմունք է բերում: Հիվանդության պատճառ հանդիսացող շատ գործոններ մեր կյանքում այլևս չկան:

Մեղքի խոստովանություն

Բազում քրիստոնյաներ անհնազանդության և չխոստովանած մեղքերի պատճառով ապրում են թշվառ, տկարացած և հաճախ հիվանդ կյանքով: Չխոստովանած մեղքերն ու հանցանքները ֆիզիկական հիվանդություններից ավելի վատ են: Մեղքը կործանում է մարմինն ու հոգին:

Դավիթ թագավորը լավ օրինակ է (Սաղ. 31:9-10): Երբ Դավիթը խոստովանեց իր մեղքը, զգաց, որ իր կյանքում բժշկություն է տեղի ունենում.

«Երբ ես լուռ մնացի, ոսկորներս մաշվեցին ամեն օր հառաչելովս, որովհետև ցերեկ և գիշեր քո ձեռքը ծանրանում էր ինձ վրա, իմ թացությունը ամառվա չորություն դարձավ: Ես մեղքս հայտնեցի քեզ և անօրինությունս չծածկեցի, ասացի. «Անօրինությունս խոստովանում եմ Տիրոջը», և դու ներեցիր իմ մեղքի անօրինությունը» (Սաղ. 32:3-5):

Աստված այսօր էլ է բժշկում այն մարդկանց կյանքերը, ովքեր մոտենում են Իրեն:

Տերը բարձր է

Սաղմոս 113

Ի քանի բառեր եմ ուզում նշել, որոնք իրարից տարբեր են, սակայն եթե դրանցից յուրաքանչյուրի առաջ մի ածական ավելացնեմ, ապա այդ բառերը մեկ այլ իմաստ կստանան: Դրանք են՝ ճաշակ, աշխատավարձ, տեխնոլոգիա, բերքատվություն, ինքնագնահատական: Ի՞նչ հարմար ածական ավելացնեմ այստեղ. Օրինակ վերցնենք «բարձր» բառը. բարձր ճաշակ, բարձր աշխատավարձ, բարձր տեխնոլոգիա, բարձր բերքատվություն, բարձր ինքնագնահատական: Կարծում եմ՝ բոլորս էլ կձգտեինք նման հատկանիշով շրջապատված լինել:

113-րդ սաղմոսը խոսում է բարձրության մասին: Այն շեշտում է, որ մեր Տեր Աստվածը սովորական չէ: Նա բարձր է ու բոլոր Իրեն հուսացողներին բարձրացնող Աստված է:

Այս սաղմոսը այն քիչ սաղմոսների շարքին է պատկանում, որոնք սկսվում ու վերջանում են «ալելուիա» բառով: Սաղմոսերգիչը ուրախանալու առիթ ունի ու կոչ է անում, որ սաղմոսը լսողները նույնպես ուրախանան ու Տիրոջը օրհնեն: Իսկ ի՞նչն է նրա ուրախության առիթը. Այն, որ Տերը բարձր է ու բարձրացնում է ընկածին, մոռացվածին, զրկվածին:

Քիչ առաջ նշված արտահայտությունների միջև եղած կապը այդ բոլորի բարձր լինելն է: Երբ ասում եմ բարձր տեխնոլոգիա, նկատի ունեմ ոչ սովորական մաթեմատիկա, երբ ասում եմ՝ այս հողը բարձր բերքատվություն ունի, հասկանում եմ, որ այն սովորական հող չէ, այլ մեկ ցանում ես, հազար հնձում:

Սիրելինե՛ր, մենք պատկանում ենք ոչ թե սովորական, սահմանափակ կարողություն ունեցող, հանգամանքներից անակնկալի եկող, որոշումների մեջ կասկածներ ունեցող և տկար Աստծո, այլ բարձր, բարձրության մեջ բնակվող ու խեղճին բարձրացնող Աստծո (հմր. 4, 5, 7): Որքա՞ն է բարձր Տերը. այնքան բարձր, որ բարձրության մեջ է

բնակվում: Սա է սուրբգրության սահմանած Աստծո բարձր լինելու չափման միավորը:

Տերը բարձր է, նշանակում է՝ Նա տարբեր է, Նրա նմանը չկա, Նրա զորությանը, իմաստությանը ու ամենակարողությանը չափ ու սահման չկա:

Իսկ ի՞նչ է տալիս ինձ Տիրոջ բարձր լինելը, ի՞նչ կիրառեմ կյանքումս. պարզապես Աստծո հատկանիշների ցանկին ևս մեկ հատկանիշ ավելացնեմ ու վե՞րջ:

Կիրառությունը կարող ենք տեսնել 7-9-րդ համարներում: Կիրառությունը ոչ թե մեզ թագավորական պալատներում նստեցնելն է կամ շատ զավակներ պարգևելը, այլ մեր վախերից, մեր նախատինքից ու ամոթից փրկելն է: Իսրայելը Եգիպտոսում նսեմացված, ճընշված, ծաղրված, ստրուկ դարձած ազգ էր, բայց Աստված այնքան բարձրացրեց նրան, որ հիմա նրա խոսքը մեծ կշիռ ունի աշխարհում:

- Աղբանոցի կողքը ապրող աղքատ ու տնանկ մարդու վախը ո՞րն է: Սովից մեռնելը: Այնպես չէ, որ նրանք թափառում են աղբանոցների կողքը, քանի որ սեր ունեն աղբանոցի նկատմամբ: Ո՛չ. կերակուր են փնտրում, ու իրենց միակ մտավախությունը առանց կերակուրի մնալն է:
- Ամուլ կնոջ մտավախությունը ո՞րն է: Անզավակ մնալը, որի արդյունքում ամուսինը կարող է իրեն տնից հեռացնել, արձակել և ուրիշ կնոջ հետ ամուսնանալ: Բայց տեսեք՝ ինչ գեղեցիկ է նըշված սաղմոսում. «Տանը բնակեցնում է և որդիների ուրախ մայր է դարձնում»: Տերը ոչ միայն նրան բնակեցնում է իր տանը, այլ նաև ուրախ որդիների մայր է դարձնում: Երկու վախերը միանգամից լուծվում են:

Վախենո՞ւմ ես, որ աշխատանքդ կկորցնես, կամ սիրելիիդ կկորցնես, ամուսնության հարմար թեկնածու չես գտնի, անբուժելի հիվանդությամբ կհիվանդանաս, ներկայիս դժվարությունները քեզանից չեն հեռանա...

Որքան էլ քո վախերն իրական լինեն, պետք է հիշես, որ Տերը բարձր է, և Նա բավարար է, որ դու քեզ այսօր ապահով ու խաղաղ զգաս:

Վարդան Սարգիսյան

Հոգու համար ոչինչ

Բ Պետ. 3:3-4

Մենք ապրում ենք հակասությունների աշխարհում: Նախկինում գոյություն ունեցող բարոյական չափանիշները, ինչպիսիք են՝ ազնվությունը, անկեղծությունը և ընկերասիրությունը, հիմա արդեն հետամնացություն են համարվում:

Մարդիկ այսօր պակասություն չեն զգում աշխարհի առաջարկների առումով՝ մոլախաղեր, զանազան զբաղմունքներ... Սակայն աշխարհի ոչ մի զբաղմունք չի կարող լցնել հոգին:

Կյանքը ճանապարհորդություն է, որն ավարտվում է Աստծո գահի մոտ: Եվ այստեղ կա միայն մեկ ուղեցույց՝ Աստվածաշունչը՝ Աստծո Խոսքը: Այն խոսում է փրկության ճանապարհի մասին՝ ցույց տալով ճիշտ ուղղությունը:

Սակայն կան ծաղրողներ, որոնք ծալում են ձեռքները և հարցեր են տալիս. «Ո՞ւր է ձեր Աստվածը: Դեռ ոչ ոք չի վերադարձել ու չի ասել, թե ինչ է տեղի ունենում մահից հետո»: Մենք կարող ենք տալ միայն մեկ պատասխան. «Սպասե՛ք ու կտեսնե՛ք: Մի օր բոլորդ հասկանալու եք, բայց չափազանց ուշ է լինելու»:

Ծաղրողները պետք է հարցնեն քրիստոնյաներին, որոնք հալածվում են որոշ երկրներում, թե ինչո՞ւ են նրանք նախընտրում հայտնվել բանտում հավատքից հրաժարվելու փոխարեն: Նրանք այդպես են վարվում, քանի որ վախենում են Աստծուց, լսում են Նրա ձայնը և հնազանդվում են Նրան: Այդպիսի վկաները փառավորում են Աստծուն, և Նա փառավորելու է նրանց (տե՛ս Ա Թագ. 2:30):

Քաղված

Ծառայության բաց դռներ

Կորոնավիրուսային հիվանդությունը փոխեց բոլորի ծրագրերը, սահմանափակեց մարդկային՝ արդեն իսկ սոցիալական ցանցերի պատճառով սահմանափակված շփումը: Մարդկանց մտածելակերպը, մոտեցումները, հավատալիքները փոխվեցին. գնահատեցին կարևորագույնը՝ առողջությունը և Աստծո գոյության ճշմարտությունը:

2020 թվականի մարտ ամսից սահմանափակվեցին նաև մեր հոգևոր ծառայությունները մեծաքանակ մարդկանց շրջանում: Ժամանակավոր դադար ունեցան քրիստոնեական դաստիարակության խմբակները, մեծահասակների հանդիպումներն ու սերտողություններն Աստծո Խոսքի շուրջ, ծրագրված միջոցառումներն ու հյուրերի այցը Հայաստան: Սակայն, փառք Աստծո, որ Նա աղոթքներ լսող և պատասխանող Տեր է, և գիտի ճիշտ ժամանակն ու օրը մարդուն ուրախացնելու և ծառայության նոր դռներ բացելու համար:

2021 թվականի ամառային ամիսները լի էին նոր փորձառությամբ: Աստծո օգնությամբ և իմաստությամբ հունիսին կարողացանք երեխաների համար կազմակերպել և անցկացնել ամառային եռօրյա միջոցառումներ Խորոնք և Մերձավան գյուղերում, իսկ հուլիսին՝ մեկօրյա հանդիպումներ Տավուշի մարզի Հովք գյուղում, Վանաձոր և Երևան քաղաքներում:

Միջոցառումներին մասնակցող երեխաների և պատանիների թիվը 245-ն էր:

Խորոնք գյուղի ամառային միջոցառմանը մասնակցում էր մի կին, ում ամուսինը Առաքելական եկեղեցու առաջնորդ էր: Մենք դրա մասին իմացանք վերջին օրը, երբ նա բարձրախոսը վերցրեց և իր սրտի խոսքն ուղղեց մեր հիմնադրամին՝ շնորհակալություն հայտնելով միջոցառման համար, հատկապես շեշտելով Աստծո Խոսքի ճշմարտության մատուցումը: Քանի որ մեծ ուրախություն էր նրա համար, որ ներկաները՝ իր երեխաներից սկսած, Աստծո Խոսքի ճշմարտութ-

յունն էին լսում միմյանց հետ ճիշտ վարվելու փոխհարաբերությունների մասին:

Թող Աստված օգնի յուրաքանչյուր մասնակից երեխայի, որ փոխված կյանք ապրի, համարձակ պատմի Աստծո սիրո մասին և աճի Նրա շնորհի ու գիտության մեջ: Ինչպես նաև աղոթե՛նք մեր աշխատակիցների, կամավոր օգնականների միաբանության համար, որ կարողանանք միասին շարունակել ծառայել Տիրոջը:

Միջոցառումների վերջում երեխաներին նվիրել ենք քրիստոնեական դաստիարակությանը նպաստող գրքույկներ, ինչպես նաև նվերներ, որոնք մեր հիմնադրամի կողմից ներկրված բեռի ապրանքներից էին: Շնորհակալ ենք Տիրոջը, որ բեռի ներկրման ծառայությունն ունենք:

Օրհնված էին նաև մեզ կամավոր օգնողները: Շատ ոգևորված էին, որ կարողացան օգնել, մաս կազմել ավետարանչության և Տիրոջ գործի շարունակման մեջ: Խմբում օգնում էին չորս կամավորներ:

Նրանցից մեկը հովվի աղջիկ էր: Նա երկար տարիներ անցկացնում էր բակային ճամբարներ, տարբեր միջոցառումներ և ուներ բավական փորձառություն այս ծառայության ոլորտում: Սակայն մեծ էր իմ զարմանքը, երբ նա ասաց, որ հատուկ էին նրա օրհնություններն այս ընթացքում. շատ նոր մոտեցումներ սովորեց, որոնք ծրագրում է կիրառել իրենց միջոցառումների ժամանակ: Նաև կար մի քույր, ով առաջին անգամ էր մասնակցում նման միջոցառումների: Եվ այն միտքը, որ ինքն օգնական է, ստիպել էր նրան մտածել, որ շատ փոքր բաժիններում է օգնելու: Բայց երբ նրան խմբավար նշանակեցինք և գիտակցեց իր պատասխանատվությունը «օգնելու» գործում, արցունքներով պատմեց իր ապրումների, օրհնությունների մասին:

Երկար սպասված միսիոներական խումբն Ամերիկայի Միացյալ Նահանգներից այցելեց Հայաստան 2021 թվականի հուլիս ամսին: Խումբը փոքր էր, ժամանակը՝ քիչ, բայց շատ մեծ դեր ունեցավ մեր ծառայություններում և մեր կողմից հովանավորություն ստացող կարիքավոր ընտանիքների կյանքում:

Միասին անցկացրած յուրաքանչյուր օր առիթ էր նորը սովորելու, Աստծուն ավելի ճանաչելու և միմյանց համար բարի օրինակ լինելու: Ծրագրված էին այցելություններ կարիքավոր ընտանիքներին, միսիոներական ավետարանչություն թե՛ ՀՀ քաղաքացիների, թե՛ ԱՀ-ից ՀՀ-ում ապաստան գտած քաղաքացիների համար, ինչպես նաև մանկական հանդիպումներ: Կազմակերպված հանդիպումների ժամանակ կարիքավոր ընտանիքներին տրամադրեցինք նաև նյութական աջակցություն: Թե՛ մեծահասակները և թե՛ փոքրիկները շատ ոգևորված էին: Նրանք գնահատված էին զգում իրենց, որ խմբի յուրաքանչյուր անդամ անհատական մոտեցում ուներ իրենցից յուրաքանչյուրի հանդեպ: Շնորհակալ էին, որ իրենց նյութապես օգնելուց բացի՝ տեսնում և օգնում էինք հոգևոր և զգացական կարիքները հոգալու հարցում:

Իսկ օգոստոս ամսին հիմնադրամի աշխատակիցներով և մեր կողմից հովանավորություն ստացող կարիքավոր ընտանիքների երեխաների հետ մասնակցեցինք «CEF Արմենիա» կրթական-բարեգործական հիմնադրամի կողմից կազմակերպված ստացիոնար ճամբարին: Նշեմ, որ ճամբարի վայրի համար երկար տարիներ աղոթել էինք, և Տերը բարի պատասխան էր շնորհել: Երեխաները լսեցին Աստծո մասին ճշմարտություններ, սովորեցին օգտվել Աստվածաշնչից և անցկացնել առանձին հաղորդակցություն Աստծո հետ: Սովորեցին նաև մարդկային որակներ, որոնք իրենց կուղղորդեն ողջ կյանքի ընթացքում, մասնակցեցին հետաքրքիր մրցույթների, խմբային խաղերի, որոնք օգնեցին նրանց՝ լինելու ավելի միասնական:

Մեր աղոթքն է, որ Աստված շարունակի օրհնել մեր ծառայությունները մեծահասակների և փոքրերի հետ, օրհնի Հայաստանը, այն մարդկանց, ովքեր օգնում, կարեկից են լինում տկարին, կարիքի մեջ եղողին: Աղոթում ենք, որ Տերը օգնական լինի, որ կարողանանք ավելի շատ այցեր կազմակերպել Հայաստանում, ավելի շատ ծառայություններ կազմակերպել մեծահասակների և փոքրերի՝ մեր կարիքավոր ընտանիքների համար:

Անժելա Հարությունյան